† Հ. ԼԻՆՉ

Երկհատոր «Հայաստան» նշանաւոր գրքի հեղինակ յայտնի անգլիացի Հ. Լինչի մահուան (նոյեմբ. 11-ին) առթիւ Նորին Սրբութիւն Վեհափառ Կաթուղիկոսն Ետրոպայի Հովիւ Տ. Գէորգ արքեպիսկոպոսին բարեհաճել է անցեալ 1913 թ. նոյեմբերի 15 ուղարկել հետեւեալ հեռագիրը.

«Մանչեստր, Գէորգ արքեպիսկոպոս Իւթուճեանին, յայտնեցէք մեր ցաւակցութիւնը Լինչի մահուան առթիւ՝ Լօնդոն»:

Տ. Գէորգ արքեպիսկոպոսն իւր 2|15 դեկտեմբերի գրութեամբ յանուն Նորին Վեհափառութեան յայտնում է, որ կատարուած է Նորին Սրբութեան կամքը և Մանչեստրի հայոց եկեղեցում տեղի է ունեցել ս. պատարագից յետոյ հոգեհանգստեան կարգ խունն բազմութեան ներկայութեան Լինչի համար: Լօնդոնի հայազգիների կողմից էլ պսակ է դրուած նորա դագաղի վրայ:

Ետրոպացիներից շատերը հետաքրքրուել են հայ ժողովրդով և Հայաստան երկրով, շատերը հրատարակել են իրենց կատարած ճանապարհորդութիւնն, ուսումնասիրելով Հայաստանը բազմակողմանի կերպով, և, ինչպէս խոստովանում են հենց իրենք Ետրոպացիները, Լինչի թանգարժէք երկհատոր «Հայաստան» աշխատութիւնը երկար ժամանակ կըմնայ Ետրոպական գրականութեան մէջ Հայաստանի և հայ ժողովրդի ուսումնասիրութեան վերաբերեալ աշխատութեանց շարքում մի հազուագիւտ անգնահատելի գործ: Երկար տարիներ է, որ Հայկական Հարցը զբաղեցնում է շատերին մարդասիրական տեսակէտից, բայց ընդհանրապէս Հայաստան երկիրն և հայ ժողովրդի բազմակողմանի կեանքն ոչ միայն Ետրոպացիների՝ մասնաւորապէս ուս աշքի ընկնող քաղաքական և գրական հասարակական գործիչների համար՝ եղել է բոլորովին անծանօթ, այլ նոյն իսկ հայերիս

շատերի համար։ Ահա և Լինչի այդ նշանաւոր աշխատութիւնն անգլիերէն և ռուսերէն հրատարակութեամբ միջոց կըտայ հետաքրքրուողներին մանրամասն ծանօթանալու Հայաստան երկրին ու նորա ժողովրդեան, իւր աշխատութեան նպատակը Լինչը գրքի յառաջաբանում բացատրում է հետևեալ առանձին հետաքրքրութեան արժանի կարևոր և մինչև այժմ շատերից չնախատեսուած նոր հայեացքով.— «Որ իրեն մղել է դէպի Հայաստան շատ անգամ արևելքում կատարած ճանապարհորդութեանց ժամանակ իւր մտքում հետզհետէ բարդուած այն համոզմունքը, որ Հնդկաստանից դէպի արևմուտք ընկած բոլոր արևելեան երկրների fադամական առեղծուածի (проблема) հանդոյցը գուցե ամենից հեռ խճճուած է Հայաստանում։ Ահա մի կողմից այդ կարևոր հայեացքը, միւս կողմից Հայաստանի աշխարհագրական դիրքին ծանօթանալու և առհասարակ մարդկութեան որոյան կոչուող պատմական տեղերը դիտելու իղձը Լինչին մղել են ճանապարհորդել և կազմել այդ երկհատոր կարևոր աշխատութիւնը։ Հայաստանին ծանօթ գիտնականները խոստովանում են, որ ոչ մի բան չէ վրիպել նորա նուրբ դիտողութիւնից ու զգեցիկ գրչից։

Լինչի «Հայաստան» երկհատոր աշխատութիւնը թարգմանուել է ռուսերէն բաւական յաջող և 1910 թուին հրատարակուել Թիֆլիսում բոլորովին նոյն ձևով, ինչպես անգլիերէն բնագիրը թէ պատկերների և թէ մաքուր ու շքեղ տպագրութեան կողմից[1]։ Բոլոր նկարներն ու քարտէզները տպուած են Անգլիայում։ Ուրախութեամբ լսում ենք, որ Պօլսում ներկայումս այդ կարևոր աշխատութիւնը բնագրից թարգմանում է հայերէն բանաստեղծ Լօրենցը։ Կարևոր ենք համարում «Արարատ»ի ընթերցողներին տալ Լինչի կենսագրութիւնը, որ և ստորև բերում ենք։

Բ. վ. Ա.

---

1) Арменія Х. Линча, переводъ съ англійскаго Елизаветы Джунковской, въ двухъ томахъ, Тифлисъ. 1910 г. цѣна 18 руб.